



ՄԵԶԲԵՐՈՒՄՆԵՐ ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻՑ

Քանզի սուրբ Աթոռս է շնորհօքն Աստուծոյ մեծանունն և հռչակեցեալ, լցեալ միաբանիք և պէսպէս պաշտօնէիք, պերճացեալ երևելի զարդոյք և կահիւք, ճոխ փառօք և անթագոցանելի հանդիսիք, ունօղ բազմապիսեաց ելից և մտից: Եւ վերջապէս գոյով քաղաք ի վերայ լերին՝ որ ո՛չ կարէ թագչիլ ըստ Տեառն բանի: Ըստ անուանն՝ իշխօղ բազմաց, ըստ գործոյն՝ և ո՛չ միոյ, ի լեզուս՝ ունօղ ամենայն բարեաց, և ի յինքն՝ կարօտ յամենայնի: Գտանեցեալ ընդ իշխանութեամբ ամիշխան տերանց խստասրտաց և զազանարարոյից յափշտակողաց, և ինքն անգօր և անուոր: Նպաստակ՝ բոռն և ամենակերպ պահանջողաց իւրայնոց և աշայնոց, և ինքն կամաւոր և երկիւղի մուրացօղ: Արդ այսպիսոյ տան և սորին տանուտեառն՝ և գործակալացն և հարազատ ընտանեացն ո՞րքան հարկաւոր է ի հաշելիս և ի հնարացոյց խրատս և յօրինակս անցելոցն պարապիլ, գիտութեան փորձառողացոյ թողում:

Արդ եւ յետինս ի սպասաւորաց և ստրուկս ի պաշտօնէիցն սրբոյ Աթոռոյս Էջմիածնի՝ Սիմէօն լոկ և եթ անուամբ Կաթողիկոս, որ պատահեցայ ի վերջին և յամենաթշուառ ժամանակոյս, ի ՌՄԺԲ թոռոջս մերում, տեւի՝ զի յառաջնոց լուսահոգեաց և երանելեաց Հայրապետացն մերոց (որոց բարերարութիւնքն, օգտարարութիւնքն, և արիւնախառն քրտամբք աշխատութիւնքն յոլովք և անգրելիք են ի վերայ սրբոյ Աթոռոյս, որոց զարդիւնն վայելեմք մեք ի վաստակս անցաւ մտանելով, սակայն) ո՛չ ոքն էր արարեալ

զփոյթ ի գիր արկանել և արձանացուցանել զորպիսութիւնն սրբոյ Աթոռոյս և զպարագայն սորին, զո՛ն և զառ ինքեամբք եղեալ պատահմունսն, յորոց ո՛չ սակաւ օգուտք յառաջանային յետնոցս և յառաջանալոց էին ի ժամանակս ժամանակս: Արդ եւ յամենայնի անարդիւնս և անպէտս՝ որովհետև չունէի զկարօղութիւն և չկարացայ իսկ ինձէն յառկապէս զարդիւնաւոր գործ ինչ յառաջացուցանել, զայս զտի ինձ բանեւող, և իբր զդիմակալ երեսաց իմոց, այս ինքն զարարեցեալ բարերարութիւնն և զոսկեփայլ գործնն անխնեաց երանելեաց (որք ծածկեցեալք էին և որպէս թէ անհետացեալք խաարաւ մոռացութեան և անգիտութեան)՝ ի լոյս րեւեալ փայլեցուցից. որովք ոսկեպէս անուանք անցին փառաւորեցին մշտնջենապէս ի սուրբ Աթոռոջս ի մէջ տաճարիս Աստուծոյ, ընդ որս և եւ և իմս այս՝ զոնէ իբրև զխեցեղէն հաշուեցեալ յիշատակիցուք: Վասն որոյ յառաջադրեցի զայս գիրք, որ կոչի Յիշատակարան, և պարունակօղ բնափց որպիսութեանցն սրբոյ Աթոռոյս: Քանզի գրեցի ի սմա զամենայն որպիսութիւնն, այս ինքն զորպիսաբար հաստատիւն, զորպիսաբար կեալն և կառավարիլն սորին և սորին Աթոռակալացն՝ ներքսպէս և արտաքսպէս: Ջորքանաբար տարածումն իշխանութեանն և պատուոյն և զերբեմնական տկարութիւնն և զվշտակրութիւն, զ՝ ի սմա նստօղ Կաթողիկոսունսն, որոց և զորպէսն, և յորս զատաւել բարերարսն:

Սուրբ և Աստուածային Քրիստոսակերտ և լուսանկար ամենից Հայոց Աթոռս Էջմիածին, առ յոր էջ Միածին Բանն Աստուած հայրական փառօր, հրաշալի լուսով և բազմութեամբ զօրօք հրեշտակաց, և ձևակերպեալ յօրինեաց զսա աստուածային լուսով, ըստ որում և հրաշակերտեաց սուրբն Գրիգորիոս Լուսաորիչն մեր ի յԱթոռ յատկապէս ազգիս Հայոց, և մայր ամենայն Եկեղեցեաց և շնորհածին ծնող նոցին մանկանց, եղև ՅԵ թուոջ մարդեղութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Քանզի որպէս ի հնումն եցոյց Մովսիսի (որ առաջնորդէր հնոյն Իսրայէլի) զձև խորանին ի շինել յառուկ տեղի և բնակարան աստուածութեան իւրոյ, և ի դաստիարակ և տեղի ապաւինի հնոյ ժողովրդեանն, նոյնպէս և ի նորումս եցոյց զձև խորանիս այսմիկ սրբոյն Գրիգորի (որ եղև առաջնորդ նորոյս Իսրայէլի) ի շինել յառուկ տեղի և բնակարան ինքեան՝ ի մայր և դաստիարակ՝ և տեղի ապաւինի նորոյս ժողովրդեան ազգիս Հայոց: Արդ, սուրբ Աթոռս այս աստուածակերտ յառաջին ժամանակսն ի Լուսաորչէն մերմէ ի յորդիսն և ի թոռունսն և ի մերձաւորսն նոցունց էր յառապէս շէն և պաշտօն՝ հոգևորօք և մարմնաւորօք, և պերն իշխանութեամբ: Քանզի ձգիր անխնայութիւն և հոգևոր իշխանութիւն սորին ի յամենայն Հայս ի Վիրս, և յԱղուանս: Եւ ի սմա նստէին Հայրապետքն Ազգիս մերոյ, և ի սմանէ ծառայիր յամենայն երկիր խորհուրդք եկեղեցոյ և սրբալոյս Միտոնն օծութեան: Ապա ի տկարանալ իշխանութեանն մարմնաւորի Ազգիս մերոյ, և ի զօրանալ թշնամեաց, և ի յաճախիլ պէտպէս յարուցմանց հինից, թագաւորք և իշխանք մեր ըստ ձեռնորոշեան ժամանակին՝ ուր տեսանէին պատեհաւոր և ձեռնորոշ ինքեանց և յապահովութիւն ի թշնամեաց՝ անդ ամրացեալ բնակութիւն առնէին՝ ընդ նոսին և Հայրապետքն:

ԷԶՄԻԱԾԻՆ

Ջիհն էլիք տեսանել յերկիրս յայս, և կամ զիհն կամիք իմանալ զմայրս մեր Ս. Էջմիածին. տոհմ իմն մարդկան ձեռագործ՝

—Ո՛հ:

Եւ կամ հասարակ եկեղեցի իմն ի մարդկային ճարտարութենէ և ի յերկրային նիւթոյ կազմեցեալ՝

—Ո՛հ:

Եւ կամ զիհն էլիք տեսանել և իմանալ ի դաշտս Վաղարշապատու. զգեղեցիկ իմն շինած, և կամ զնկարակերտ իմն ազնիւ

ըստ մարմնականի և ըստ երևելոյ տեսութեան միայն՝

Այլ զիհն էլիք տեսանել և իմանալ զհոգեւոր և զաստուածային իմն կերտուած, և կամ զխորհրդաւոր երկին իմն ի յերկրի երևեալ.

—Այո, ասեմ ձեզ, առաւել ևս քան զերկին...:

Էջմիածին՝ տաճար փոքրագոյն՝ քան զերկինս մեծագոյն:

Էջմիածին՝ զարդ եկեղեցեաց, պարծանք Հայաստանեայց, արեգակն պաշտօնագոյն և լուսաորոյ տաճար Արամեան:

Էջմիածին՝ ծնող հոգևոր, մայր շնորհատուն, համալսարան իմաստութեան, վարժարան գիտնոց և նիւթ քարոզողացն:

Ահա Լուսաորիչ հայրն ձեր սուրբն Գրիգոր և հոգեծին մայրն ձեր սուրբ Էջմիածին հանդերձ ամենայն վանօրէիք և եկեղեցեօք Հայաստանեայց, և ամենայն հոգևոր և մարմնաւոր նախնեօք և երախտաւորք ձերովք միշտ աներևութաբար աչապէս գրեն և պատուիրեն ձեզ ամենայն հեռացելոց և տարագրելոց ազգիդ Հայոց հայրական սիրով և ցաւակցական սրտիւ: Եւ դուք սիրելի ազգդ իմ Հայոց, ոչ պարտիք զբանս զայս վայրապար իմանալ և զանց առնել, այլ ճշմարտի գիտասցիք և հաստատացիք:

Չայսքանս գրեցաք ի զգաստացուցանել զսիրելի ազգդ իմ, զի որքան հմար է, ջանասցիք զմանկումս ձեր ի յուսումն գրոց կրթել նախ քան զայլ արհեստս աշխարհականս, զի զայլս արհեստս իբր և իցէ կարեն ուսանիլ, բայց զուսումն գրոց ի մանկական տիւղն միայն կարեն ուսանիլ: Եւ զայս ևս գիտեմ հաւատեալ, զի ի խոնարհ յազգէս մերմէ պատճառեն ոմանք զաղքատութիւնս և զմարմնաւոր պէտպէս վիշտս և զնեղութիւնս ի յայլահաւատ իշխողաց. և ոմանք զպանդուխտ և տարագրեալ գոյն յերկրէ և ի հայրենեաց և զայլս աշխարհիս, զորս և ևս գիտեմ և վկայեմ. որք և ունելով զիրաւունս, չեն իսկ մեղադրելիք: Բայց այնպիսեացն և զայս ասեմ թէ ի յարդեան վիշտոյ որպէս ջանաս և հնարես առ ի գտանել զմարմնաւոր ապրուստդ, դորին մասին չափ ջանա՝ և հնարես՝ ի ձեռս քերել զհոգւոյդ ապրուստն և զզարդարիչն հոգւոյդ և մարմնոյդ, որ է գիտութիւնն. և զմանկումս քո ևս ի յայն կրթեալ, որքան և հմար իցէ: Բայց առ այս ևս, մերազնեայ փորձեալ ողորմաբար և մերաշաւան անձանց հաւատալ, զգուշանալով ի խմորելոց ախթարմայից:

Ի տարանջատ վայրէս ահա՝ առընծայեմ քեզ ողջոյն, իմ անմամն և անարատ սիրաւորնդ սիրելոյն, սիրելոյն շնորհածնի ծնողիդ իմոյ՝ աստուածակերտ սուրբ տեղւոյն. յորմէ հայցեմ հեծեծամօք, զիս մի՛ մերժեր ի սիրոյն ի գթոյն, զի դու ես մայր գորովագութ սարտուցելոյ որդոյն քո, որդոյն քո:

Էջմիածին քաղցրիկ անուն, շտեմարան շնորհաց, գորս յորդօրէն գերասիայես ի միտս քոյոց, զաւակաց, զաւակաց, ո՛հ անույ ինձ, որ ես միայն զրկիմ ի քո խրախճանաց, ընկալ, ո՛վ սուրբ Էջմիածին զխորհացեալ որդիս քո, որդիս...

Նոցա ասեմ ես երանի՛ որք կան բազմեալ ի ծոց քո, յորոց յետինն է լաւ քան զիս որ եմ ի քէն արտաքոյ, արտաքոյ. թող չիցէ ինձ բոլոր աշխարհ որ առանց քեզ չէ պիտոյ. ընկալ, մա՛յր իմ, Էջմիածին զխորհացեալ որդիս քո, որդիս:

Ինձ սև լինիցէր ծամն այն՝ յորում ի ծոցոյն էի. և խաւարին խորհուրդն այն որ արար զիս, խղճալի, խղճալի. չլուսանայցէր օրն այն, յորում ես զքեզ թողի. ընկալ, մա՛յր իմ, զիս վերստին զսարտուցեալ որդիս քո, որդիս:

Ի գիրկ ծնողիդ մերոյ հանգչիլ ե՛րբ իցէ, ո՛վ մայր, ե՛րբ իցէ. և տեսութեամբ քով ըզմայիլ, ե՛րբ իցէ, ո՛վ մայր, ե՛րբ իցէ. ո՛հ, զմայրական սէրդ ի գործ արկեալ ե՛րբ իցէ, ո՛վ մայր, ե՛րբ իցէ. զձագունս քո ծողովել ե՛րբ իցէ, ո՛վ մայր, ե՛րբ իցէ:

Սիրտ իմ արդէն նոր ի նորոյ մորմոքի, որդեակք, մորմոքի, սիրով ձագուցդ իմոց աղիքս գալարի, որդեակք, գալարի: Ո՛հ, զի բերկրութիւն մօրն է որդովք յիրաւի, որդեակք, յիրաւի. բայց ոչ գիտեմ կամք փեսայս ե՛րբ իցէ, որդեակս, ե՛րբ իցէ:

Բարձան ի մէնջ հովիւք արթունք և իրաւունք մերժեցան. արք իմաստունք և ուսուցիչք յազգէս մերմէ սպառեցան, աստուածապաշտ իշխանքն մեր ահա իսպառ վերջացան: ...Սուգ զգեցան երկինք երկնիւք վասն մերոյ կորստեան. որոց և երկիր ձայնա-

կցեալ՝ զթշուառութիւնս մեր ողբան. զի գինք արեան ստեղծողիդ յանօրինաց վատնեցան...

Ո՛վ պանդուխտ այդ դու՝ սիրելի, ոհ, աւա՛ղ, աւա՛ղ. ընդէ՛ր արդպէս վարանեցեալ տրտում շրջիս, աւա՛ղ. և միշտ ի յոգոց հանելով մորմոքիս... Ո՛վ մնացեալ դու ցաւալի, ոհ, աւա՛ղ, աւա՛ղ, վասն է՛ր արքան հառաչանօք ողբաս յաւերժաւագ. և զտեսողաց աղիւսն տոչորես... Ո՛հ, մի՛թէ քնաւ դու չես լուեալ, կամ ընթերցեալ զձառքս մախմեաց, ընթերց և տես զանցրս մոցին:

Աշխարհս է ծով միշտ պեկոծ, տուն փորձանաց և բուն ցաւոց. կարծես՝ դու մնալ ի սմա անալեկոծ: Արի՛, խղճուկ, արիացի՛ր, զանօգուտ խցմունդ ի բաց դիր. յուսա ի Տէր և ի նա ապահմիր...:

ՄԻՄԷՆՆ ԵՐԵՒԱՆՑԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ,
ԱՍՍՏԵԱՆԻ ՏԵՐ ՈՂՈՐՄԵԱՆ

Արի՛, Աստուած հարցն մերոց.
Որ ապաւեճի ես նեղելոց.
Հաս յօգնութիւն ծառայից քոց.
Անօգնական ազգիս հայոց:

Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր,
ողորմեա՛:

Միջնորդութեամբ սրբոյ խաչիդ,
Եւ անարատ սուրբ Մընողիդ
Յիշեալ զհեղումն արեան Փրկչիդ.
Ել ի խնդիր փոքու հօտիդ:

Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր,
ողորմեա՛:

Զի գիտացուք մեք հաւաստեալ.

Որ չափ մեղաց մերոց լցաւ.

Ուստի, Տէրդ մեր բարկացաւ

Առ՝ի խրատել զմեզ զարթեալ:

Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր,
ողորմեա՛:

Արդ, անկանիմ առաջի քո.

Գոչեմք մեղայ Տեառնդ մերոյ.

Դարձո՛ ի մէնջ զցաւսմն քո.

Վասն անսպառ գթութեան քո:

Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր,
ողորմեա՛: